Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1032-25.11.2010-ԳԲ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 88-րդ հոդվածում.

1) առաջին մասի սանկցիայում «երեսնապատիկից մինչև հիսնապատիկի» բառերը փոխարինել «յոթանասունապատիկից մինչև հարյուրքառասունապատիկի» բառերով, իսկ «հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի» բառերը փոխարինել «հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի» բառերով:

2) երկրորդ մասի սանկցիայում «հիսնապատիկից մինչև ութսունապատիկի» բառերը փոխարինել «հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի» բառերով, իսկ «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի» բառերը փոխարինել «հարյուրյոթանասունապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի » բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենսգրքի 89-րդ հոդվածի սանկցիայում «երեսնապատիկից մինչև հիսնապատիկի» բառերը փոխարինել «հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի» բառերով, իսկ «հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի» բառերը փոխարինել «հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորներ Վ. Մախսուդյան և Մ. Ստեփանյան	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետի «հիսնապատիկից» բառը փոխարինել «յոթանասունատիկից» բառով, իսկ «հարյուրապատիկից» բառը՝ «հարյուրհիսնապատիկից» բառով:	Ընդունվել է :	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետի «հիսնապատիկից» բառը փոխարինվել է «յոթանասունապատիկից» բառով, իսկ 2-րդ կետի «հարյուրապատիկից» բառը՝ «հարյուրհիսնապատիկից» բառով: Միաժամանակ խստացվել է նաև իրավախախտման համար նախատեսված առավելագույն սանկցիան: